# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**ՀՀ Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/07» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

| | |
|---|---|
| ***գ. Մեծավան*** | «28» «ապրիլի» 2022թ.<br>ժ 10:30 |
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Մ. Սուքիասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Վ. Դումիկյան |
| | Տ. Խաչատրյան |
| | Գ. Քաչակուլյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Մարկոսյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

/Մ. Սուքիասյան/

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Գնահատման արդյունքների և ընտրված մասնակիցների մասին
4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

## 2. Բանակցությունների կազմակերպման մասին

/Մ. Սուքիասյան/

2.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասը և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/07» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 28.04.2022թ. ժամը 10:30-ին հրավիրվել են ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում գների նվազեցման շուրջ բանակցությունների:

2.2 Գների նվազեցման շուրջ բանակցություններին չեն ներկայացել «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

2.3 Բանակցությունների ավարտին «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/07» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների՝ «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկները:

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը | | | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր | |
| 1 | Բենզին ռեգուլյար | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 1515833,33 | 303166,67 | 1819000 | 1700000 |
| | | «Մաքս Օիլ» ՍՊԸ | **1470500** | **294100** | **1764600** | |
| 2 | Դիզելային վառելիք | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 2903333,33 | 580666,67 | 3484000 | 2652000 |
| | | «Մաքս Օիլ» ՍՊԸ | **2773333,33** | **554666,67** | **3328000** | |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

## 3. Գնահատման արդյունքների և ընտրված մասնակցի մասին

/Մ. Սուքիասյան/

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված 40-րդ կետի 6-րդ ենթակետի գ, պարբերությունը՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը

լրանալու պահին, մասնակցի ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը և գնահատող հանձնաժողովը որոշեց ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր /29.04.2022-03.05.2022/: Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մաքս Օիլ» ՍՊԸ -ին:

**4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

/Մ. Սուքիասյան/

4.1 «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/07» ծածկագրով ընթացակարգի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման, արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 10:30-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Մ. Սուքիասյան |
| Անդամներ՝ | | Վ. Դումիկյան |
| | | Տ. Խաչատրյան |
| | | Գ. Քաչակուլյան |
| Քարտուղար՝ | | Գ. Մարկոսյան |